


**1.2.6. Առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

2010թ. հունվար-հունիսին ԼՂՀ սպառողական շուկան (ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի) կազմել է 37916.6 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համադրելի գներով, աճելով 2.6 տոկոսով:

	2009թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ	2010թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ	2010թ. հունվար-հունիսը 2009թ. հունվար-հունիսի նկատմամբ, համադրելի գներով, տոկոսներով	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	
				2009թ. հունվար-հունիս	2010թ. հունվար-հունիս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում՝	34054.5	37916.6	102.6	100.0	100.0
մանրածախ առևտրի շրջանառությունը	27183.2	29670.0	102.0	79.8	78.3
բնակչությանը մատուցված ծառայությունները	6871.3	8246.6	107.3	20.2	21.7

Սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների կառուցվածքն 2009- 2010թթ. հունվար-հունիսին (տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ)



■ մանրածախ առևտրի շրջանառությանը ■ բնակչությանը մատուցված ծառայությունները


Մանրածախ առևտուր

2010թ. հունվար-հունիսին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 29670.0 մլն դրամ, որը 2009թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 2.0 տոկոսով:

Մանրածախ առևտրի շրջանառությունը 2010թ. հունվար-հունիսին

	2010թ. հունվար-հունիսին		Ընդամենի նկատմամբ, %
	Շրջանառությունը, ընդամենը, մլն դրամ	2009թ. հունվար-հունիսի նկատմամբ, համադրելի գներով, %	
Մանրածախ առևտուր, ընդամենը այդ թվում՝	29670.0	102.0	100.0
խանութների	21896.5	102.5	73.8
սպառողական ապրանքների շուկաների	2047.2	100.1	6.9
գյուղատնտեսական ապրանքների շուկաների	919.8	103.8	3.1
առևտրի այլ օբյեկտների	4806.5	100.1	16.2

Մանրաձախ առևտրի շրջանառությունը ըստ ձևավորման աղբյուրների, 2010թ. հունվար-հունիսին




Մանրաձախ առևտրի շրջանառությունն ըստ ԼՂՀ շրջանների, 2009-2010թ. հունվար-հունիսին

	2009թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %	2010թ. հունվար-հունիսի փաստացի ծավալը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	27183.2	100.0	29670.0	100.0
բ. Ստեփանակերտ	15005.1	55.2	20175.8	68.0
Ասկերան	2120.3	7.8	2017.6	6.8
Հաղբուք	2011.6	7.4	1483.5	5.0
Մարտակերտ	2283.4	8.4	1958.2	6.6
Մարտունի	3995.9	14.7	2878.0	9.7
Շահումյան	299.0	1.1	148.4	0.5
Շուշի	516.5	1.9	474.4	1.6
Քաջաթաղ	951.4	3.5	534.1	1.8

ԼՂՀ շրջաններին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունը, հիմնականում, պայմանավորված է առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ շրջանների, 2010թ. հունվար-հունիսին



2010թ. հունվար- հունիսին մեկ բնակչի հաշվով առևտրի շրջանառությունը կազմել է 208214.9 դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, համադրելի գներով, աճելով 1.2 տոկոսով:

Մանրաձախ առևտրի շրջանառության համեմատական ակտիվությունը

	2009թ. հունվար-հունիսին	2010թ. հունվար-հունիսին	2010թ. հունվար- հունիսը տոկոսով 2009թ. հունվար-հունիսի նկատմամբ (համադրելի գներով)
Ընդամենը, մլն դրամ	27183.1	29670.0	102.0
Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության ծավալը, դրամ	194360.7	208214.9	101.2

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2010թ. հունվար-հունիսին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 8246.6 մլն դրամ, որը 2009թ. հունվար- հունիսի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 7.3 տոկոսով:

2010թ. հունվար-հունիսին 2009թ. հունվար-հունիսի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 11.9 տոկոս հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է կրթության (31.4 տոկոս), առողջապահության (7.9 տոկոս), կոմունալ (7.5 տոկոս), հանրային սննդի (7.2 տոկոս), տրանսպորտի (4.1 տոկոս) ծառայությունների սակագների աճով:


Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն ըստ տեսակների

	Փաստացի ծավալը, մլն. դրամ		2010թ. հունվար- հունիսը տոկոսով 2009թ. հունվար- հունիսի նկատմամբ (համադրելի գներով)
	2009թ.# հունվար -հունիսին	2010թ. հունվար -հունիսին	
Ընդամենը	6871.3	8246.6	107.3
<i>այդ թվում՝</i>			
հյուրանոցներ և ռեստորաններ	405.5	549.2	137.9
տրանսպորտ	991.5	1106.1	107.2
կապ	1982.6	2388.7	123.3
կոմունալ	1929.1	2058.3	99.3
սոցիալական անհատական	42.3	87.8	204.3
կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	148.1	192.6	124.4
ֆինանսական գործունեություն անշարժ գույքի հետ կապված գործունեություն	55.4	63.2	113.1
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	257.8	452.3	175.4
տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ	58.5	120.0	205.1
կրթություն	11.1	12.3	110.8
առողջապահություն	609.8	763.0	95.2
այլ տեսակի ծառայություններ	91.6	130.7	132.2
	288.0	322.4	111.9


Բերված տվյալներից երևում է, որ 2010թ. հունվար-հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել են բնակչությանը մատուցված բոլոր տեսակի վճարովի ծառայությունների ծավալները, բացի կոմունալ և կրթության ծառայություններից:

2010թ. հունվար-հունիսին բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կապի (2388.7 մլն դրամ), կոմունալ (2058.3 մլն դրամ) և տրանսպորտի (1106.1 մլն դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 29.0, 25.0 և 13.4 տոկոս:

Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների 2010թ. հունվար-հունիսին




Բնակչությանը մատուցված ծառայությունների տեսակների բաշխվածությունն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2010թ. հունվար-հունիսին




2010թ. հունվար-հունիսին բնակչությանը մատուցված բոլոր տեսակի ծառայությունների ոլորտում առկա է ք.Ստեփանակերտի գերակայությունը, բացի անշարժ գույքի հետ կապված ծառայություններից: Ըստ ծառայությունների տեսակի շրջանների տեսակարար կշիռը տատանվել է 2,0 – 72.4 տոկոսի սահմաններում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2010թ. հունվար-հունիսին



2010թ. հունվար-հունիսին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 71.3 տոկոսը բաժին է ընկել ք.Ստեփանակերտին, 28.7 տոկոսը՝ մյուս շրջաններին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի կառուցվածքն ըստ ԼՂՀ շրջանների 2010թ. հունվար-հունիսին



Մանրաձախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունն ըստ շրջանների, 2010թ. հունվար-հունիսին

	Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, մլն դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, դրամ	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ, տոկոսով
Ընդամենը	37916.6	266087.0	100.0
ք. Ստեփանակերտ	26056.3	495621.3	186.3
Ասկերան	2589.0	145433.1	54.7
Հաղրուք	1802.1	145295.5	54.6
Մարտակերտ	2365.0	119765.0	45.0
Մարտունի	3496.0	148532.1	55.8
Շահումյան	186.7	60656.3	22.8
Շուշի	724.4	140851.6	52.9
Քաշաթաղ	697.1	84867.3	31.9